

Մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց Ալֆորվիլի պատվիրակությանը

Սեպտեմբերի 21-ին Արագածոնի մարզպետ Սարգիս Սահակյանը ընդունեց Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի պատվիրակությանը, որը ղեկավարում էր Ֆրանսիայի Հանրապետության 11-14 գումարումների Ազգային ժողովի պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ղեկավարի տեղակալ Ռենե Ռուբեն:

Հանդիպման ժամանակ բարձր գնահատվեց Արագածոնի մարզի Օշական համայնքի եւ Ֆրանսիայի Ալֆորվիլ համայնքների միջեւ իրականացվող փոխգործակցության ծրագիրը: Նշվեց, որ այդ շրջանակում համայնքները հնարավորություն են ունենում մոտիկից շփվելու միմյանց հետ, համագործակցելու մշակույթի, կրթության եւ այլ ոլորտներում: Մարզպետը նշեց, որ ալֆորվիլցիների աջակցությամբ վերանորոգվում է Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցի շենքը, ինչի համար նա շնորհակալություն հայտնեց: Զրույցի ընթացքում ձեռք բերվեցին համագործակցության նոր պայմանավորվածություններ:

Մարզպետը եւ հյուրերերը այնուհետեւ այցելեցին Օշական համայնք եւ տեղում ծանոթացան դպրոցում կատարվող շինարարական աշխատանքներին: Նրանք, ընդհանուր առմամբ, բավարված էին կատարված աշխատանքից եւ ծրագրեցին վերանորոգման առաջիկա ընթացքը: